ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2025թ. Ն ՄՈ/ 714 -Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ Հ.8 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հուլիսի 21-ի Ն ՄՈ/708-Ա և 2025 թվականի հուլիսի 21-ի Ն ՄՈ/709-Ա որոշումները, «Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ս.Ղուկասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի Հ.8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լուսինե Գևորգյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ս.Ղուկասյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալի պաշտոնակատարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

2025-07-22 12:03 GMT+4
Հավաստագրման կենտրոն՝ Իրական ժամանակ

Բ.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
տեղակալի պաշտոնակատար,
մարզպետին փոխարինողի
2025 թվականի հուլիսի 22-ի
N ՄՈ/714 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Լ.Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Ա.Խաչատրյան- «Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Ս.Ավետիսյան- «Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**